



KOMITAS VARDAPET

San Joaquin Valley Armenian Churches

Western Diocese — Publicity Office

KOMITAS CENTENNIAL COMMITTEE

P. O. Box 1285

Fresno, California 93715

CENTENNIAL COMMITTEE

OFFICERS:

Chairman:

Fr. Shahe Altounian

Secretary:

Anita Kazanjian

Treasurer:

Hagie Kandarian

Advisors:

Fr. Tatoul Yeretsian

Fr. Besag Sarkisian

PUBLICITY COMMITTEE:

Chairman:

Deacon Allan Y. Jendian

Phone: 255-4288

Alice Gureghian

Phone: 264-2635

Anita Kazanjian

Phone: 834-2328

Mr. & Mrs. Aram Arax

Phone: 222-0283

FRESNO

St. Paul Church

Phone: 264-2854

Garabed Varteresian

Phone: 251-1540

Harry Hairabedian

Phone: 227-6478

FOWLER

St. Gregory Church

Phone: 834-2919

Sam Esraelian

Phone: 896-4598

Deron Ahronian

Phone: 834-2934

Hagie Kandarian

Phone: 264-8318

REEDLEY

Albert Parichan

Phone: 638-9164

or 638-3212

Nergiz Apkarian

Phone: 638-3265

YETTEM

Sam Farsakian

Phone: 734-6276

Roxie Menendian

Phone: 528-3235

Սեպտեմբեր 30, 1969

ՍԱՆ ՈՒՌՔԻՆ ՀՈՎԻՏԻ
ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Սիրելի Բարեկամներ,

Հաճոյքով կը ծանուցանենք կարեւոր ձեռնարկ մը: Նորին Ս. Օծուծիւն Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետի յանձնարարութեան համաձայն Սան Ուոքիւն Հովտի մէջ գրանուող Արեւմտեան Թեմի Հայց. Եկեղեցիները պիտի յիշատակեն Կոմիտաս Վարդապետի ծննդեան հարիւրամեակը

Գերաշնորհ Տ. Եղիշէ Եպիսկոպոս Սիմոնեան, Առաջնորդը Արեւմտեան Թեմի, նշանակած է Արժ. Տ. Ծահէ ԲՏՆյ Ալթունեանը Ատենապետ Սան Ուոքիւն Հովտի Կոմիտասի հարիւրամեակի յանձնախումբին: Երջանի չորս եկեղեցիներու ներկայացուցիչներէն յանձնախումբ մը կազմուած է պատրաստելու հարիւրամեակի տօնակատարութիւնը:

Կը յուսանք որ Սան Ուոքիւն Հովտի համայն Հայութիւնը պիտի քաջալերէ ձեռնարկը ներկայ ըլլալով յանձնախումբի ծրագրած հանդիսութեանց:

Կիրակի, Նոյեմբեր 2-ին Ֆրէզնօյի Ս. Պօղոս Հայց. Եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ եւ քարոզէ Գերաշնորհ Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեան: Ան պիտի նախագահէ հոգեհանգստեան պաշտօնին եւս:

Եկեղեցական արարողութիւններէն անմիջապէս վերջ Հասիէնտա պանթոնի մէջ տեղի պիտի ունենայ յիշատակի ճաշկերոյթ եւ մասնաւոր յայտագիր: Ճաշկերոյթի տոմսերը կանուխէն պէտք է գնել, դիւրութիւն տուած ըլլալու համար որ յանձնախումբը պատշաճ կարգադրութիւններ ընէ: Սրահը սահմանափակ թիւով անոններ ունի միայն: Դուռը տոմս պիտի չի ծախուի:

Տոմսերը կարելի է ապահովել էջիս ձախին դրուած անձերէ — 6 տոլար անձ գլուխ: Զէքերը հաճեցէք գրել ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ անուանով: Անոնք որ նամակով կուզեն տեղ ապահովել հաճին գրել վերի հասցէին:

Հարիւրամեակի տօնակատարութեան մասին յաւելեալ մանրամասնութիւններ շուտով կը դրկուին ձեզ:

ՍԱՆՈՒՑՄԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Քիւ 22087
Հոկտեմբեր 30, 1969

Հոգեշնորհ
Տ. Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց-Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիւական Խորհուրդի
Նորթ ֆիլասելֆիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Առաջնորդարանս, Կոմիտաս Վարդապետի Ճմնդեան Կարիւրամեակին առթիւ,
հրապարակ հանած է "Կոմիտաս--Կեանքը եւ Կործը" անունով գիրք մը:

160 էջերէ բաղկացած գատկերագարդ այս գիրքը կը պարունակէ Կոմի-
տասէն եւ զանազան հեղինակներէ առնուած գրութիւններ, հայերէն եւ
անգլերէն լեզուներով:

Այս գրքին գին նշանակուած է չորս տուար: Առանձին ծրարով 2եզի
կը դրկենք 50-օրինակ, յանձնարարելով որ սպառէք զանոնք Կոմիտասի
նուիրուած 2եր համերգին առիթով կամ այլապէս:

Իւրաքանչիւր գրքի համար Առաջնորդարան կը դրկէք երեք տուար, իրկ
մնացեալ մէկ տուարը 2եր համերգի կարգադիր յանձնախումբին կամ 2եր
եկեղեցւոյ հաշիւին կը փոխանցէք:

Սիրոյ ողջունելի

ՎԱՋԿԷՆ ԵՂՍ. ՕԶԱՆԵԱՆ
Առաջնորդի Փոխանորդ

Քիւ 22040
Հոկտեմբեր 30, 1969

Հոգեշնորհ
Տ. Կարուժան Ծ. Կրդ. Գապառաճեան
Հովիւ Ս. Յակոբ Հայց. Սկեղեցւոյ
եւ Մախազահ Կոմիտասի Նուիրուած
Համերգի Կարգադիր Եանձնախումբի
Էվրեսթըն.

Սիրելի Հայր Կարուժան,

Առաջնորդարանս, Կոմիտաս Կարդապետի ծննդեան հարիւրամեակին առթիւ,
հրապարակ հանած է "Կոմիտաս--Գեանքը եւ Կործը" անունով գիրք մը:

160 էջերէ բաղկացեալ պատկերազարդ այս գիրքը կը պարունակէ Կոմի-
տասէն եւ զանազան հեղինակներէ առնուած գրութիւններ, հայերէն եւ
անգլերէն լեզուներով:

Այս գրքին գին նշանակուած է չորս տոլար: Առանձին ծրարով շեզի
կը դրկենք 50 օրինակ, յանձնարարելով որ սպառէք զանոնք Կոմիտասի
Նուիրուած Ձեր համերգին առթիւ կամ այլապէս:

Իւրաքանչիւր գրքի համար Առաջնորդարան կը դրկէք երեք տոլար, իսկ
մնացեալ մէկ տոլարը Ձեր համերգի կարգադիր յանձնախումբին կը փո-
խանցէք:

Սիրոյ ողջունիւ

ՎԱԶԳԵՆ ԵՊՍ. ՕԶԱՆԵԱՆ
Առաջնորդի Փոխանորդ

Քիւ 22041
Հոկտեմբեր 30, 1969

Մեծայարգ
Տիար Հայկ Քուլմայեան
Ասեմապետ Կոմիտասի Նուիրուած
Համերգի Կարգադիր Յանձնախումբի
Ուղղործաւն.

Սիրելի Գրն. Քուլմայեան,

Առաջնորդարանս, Կոմիտաս Կարդապետի ծննդեան հարիւրամեակին առթիւ,
հրատարակ ինձած է "Կոմիտաս--Պեանքը եւ "Պրծը" անունով գիրք մը:

160 էջերէ բաղկացեալ պատկերազարդ այս գիրքը կը պարունակէ Կոմի-
տասէն եւ զանազան հեղինակներէ առնուած գրութիւններ, հայերէն եւ
անգլերէն լեզուներով:

Այս գրքին գին նշանակուած է շորս առլար: Առանձին ծրարով շեզի
կը դրկենք 30 օրինակ, թելադրելով որ սպառէք զանոնք Կոմիտասի
Նուիրուած շեր համերգին առթիւ կամ այլապէս:

Իւրաքանչիւր գրքի համար Առաջնորդարան կը դրկէք երեք առլար, իսկ
մնացեալ մէկ առլարը շեր համերգի կարգադիր յանձնախումբին կը փոխան-
ցէք:

Սիրոյ ողջունելի

ՎԱՋԳԷՆ ԵՎՍ. ՕՂԱՆՇԱՆ
Առաջնորդի Փոխանորդ

Քիւ 21811
Յունիս 3, 1969

Մեծայարգ
Տիար Հայկ Քումայեան
62 Զրոգպի Բօս
Նիւթրն, Մէսս.

Սիրելի Հայկ,

Քեմական Խորհուրդի ատենապետ Տիար Խաչիկ Կօշկարեան մեզի հաղորդեց որ հաճած էք ընդունիլ ատենապետի պաշտօնը՝ կազմելու համար Յանձնախումբ մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ Մեծագոյն Գոսթոնի շրջանին համար կազմակերպել Մշակութային ձեռնարկ մը նուիրուած Կոմիտաս Կարդապետի ծննդեան հարիւրամեակին: Այս ձեռնարկը մաս կը կազմէ Առաջնորդարանի Օժանդակ Միութեան նախաձեռնած մշակութային ձեռնարկներուն, որոնք պիտի տրուին մեր թեմի գանազան շրջաններուն մէջ:

Յայտագրին մէջ մասնակցող արուեստագէտները պիտի ըլլան Տիկին Աստղիկ Տէտեան, Փարիզէն, եւ լարային քառեակ մը, ղեկավարութեամբ Հէրրի Զառացեանի:

Տիար մէք Անդրէասեան պատասխանատու է հաղորդակցութիւն պահելու շրջաններուն մէջ կազմուած յանձնախումբերուն հետ: Յաւելեալ տեղեկութեանց համար հաճեցէք հաղորդակցիլ Տիար Անդրէասեանի հետ:

Հաճեցէք կազմել Ձեր յանձնախումբը եւ մեզի ղրկել անդամներուն անունները, իրենց պաշտօններով:

Կը մաղթենք Ձեզ եւ Յանձնախումբիդ անդամներուն կատարեալ յաջողութիւն ազգօգուտ այս ձեռնարկին մէջ:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Նիւ Եորք, 13 Դեկտ. 1969


Գերաշնորհ Տ. Թորգոմ Արքեպ. Մանուկեան

Սիրելի Սրբազան Հայր,

Առաջնորդարանիդ կողմէ իբրեւ նուէր ինձ ղրկուած
"ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ" գեղեցիկ հրատարակութեան համար, կը յայտնեմ
խորին շնորհակալութիւն: Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը
յատկապէս շնորհաւորելի է սոյն հատորը ի լոյս ընծայելուն հա-
մար, որպէս արժանի յուշարձան մը եղերաբախտ Մեծ Վարդապետին:
Վստահաբար սիրելի յիշատակ մը պիտի ըլլայ բոլոր երգասէր հայերուն:

Յարգալիր ջերմ գգացումներով

Զերզ



Very Reverend
Zaven Arzoumanian,
Pastor

(Area Code 215)
Church: ESsex 9-2515
Residence: RAndolf 5-6999

Հոգևորական Կաթողիկոսական



HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Մարտ 26, 1969

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան, Առաջնորդ
Հայր. Եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի

Կնիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ստացած ենք Ձեր Մարտ 3 Թուակիր շրջաբերականը ի մասին
Կոմիտաս Վարդապետի ծննդեան հարիւրամեակի հանդիսցւթեանց, ներ-
փակեալ նկարովն ու կենսագրական ծանօթութիւններովը:

Դպրաց Դասի, Եխական Խորհուրդի և համայնքիս Առաջնորդարանի
Օժանդակ Միութեան մասնաճիւղի գործակցութեամբ որոշած ենք Կոմի-
տաս Վարդապետի ծննդեան հարիւրամեակը տօնել Նոր Կիրակիին, Ապրիլի
13ին Ս. Պատարագի մատուցմամբ և յետ միջօրէի յատուկ յայտագրով:
Օրուան հանդիսութեանց համար հրաւիրած ենք Առաջնորդարանի Կոմիտաս
Երգչախումբը: Պիտի ունենանք գլխաւոր բանախօս մը և երաժշտական
յայտագիր:

Տակաւին չենք ստացած Վեհափառ Հայրապետի կոնդակը այս
առիթով յղուած: Թէեւ օրինակ մը օրաթերթերէն ապահոված եմ ի հարկին
գործածելու համար:

Առողջութեան և յաջողութեան մաղթանքներով կը մնամ

սիրով և աղօթակցութեամբ

Արքեպ. Տ. Արք. Արզումանեան

Զաւէն Ժ. Վրդ. Արզումանեան, Հովիւ

September 26 April 1969


Cherchez moi dans les journaux, hebdomadaires,

Le samedi 27 Mars 1969
Monsieur : Je vous prie de bien vouloir
me faire parvenir vos journaux et tout ce que
vous pouvez me procurer de journaux hebdomadaires
pour les années 1968 et 1969. Je vous prie de
m'adresser ces journaux à l'adresse ci-dessous.

Je vous prie de bien vouloir m'adresser
ces journaux, hebdomadaires 8, 10 et 12 Mars 1969
à l'adresse ci-dessous par la poste. Je vous prie de
me faire parvenir ces journaux par la poste. Je vous prie
de m'adresser ces journaux à l'adresse ci-dessous.

Je vous prie de bien vouloir m'adresser
ces journaux hebdomadaires par la poste.

Très cordialement,



AFTER 5 DAYS RETURN TO

Sahan Arzumi
242 East 89th Street, Apt. 1A
New York, N.Y. 10028

ZIP CODE

Քիւ 22079
Նոյեմբեր 11, 1969

Մեծայարգ
Տիար Եսայան Արծրունի
242 հսթ 89 Փողոց
Նիւ Եորք.

Սիրելի Գրն. Արծրունի,

Դէպի Հայաստան եւ Ս. էջմիածին մեր Մամրորդութենէն վերադարձին
տեղակ եղանք Սեպտեմբեր 26, 1969 թուակիր Ձեր նամակի բովանդակու-
թեան:

Ուրախ պիտի ըլլայինք եթէ կարենայիք գնահատելի Ձեր մասնակցու-
թիւնը բերել Կոմիտասեան փառասօծի երաժշտական յայտագրին, Դեկտեմ-
բեր 12ին:

Գոհ պիտի մնանք եթէ, ինչպէս անցեալին մէջ, հետագային եւս քա-
ժին ստանձնէք Առաջնորդարանի գեղարուեստական ձեռնարկներուն առի-
թով:

Ձերմապէս յաջողութիւն կը մաղթենք Եւրոպայի մէջ Ձեր տալիք երա-
ժշտահանդէսներուն համար:

Սիրոյ ողջութիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

SIMON SAMSONIAN
ARTIST DESIGNER & PAINTER
20 ATTRIDGE COURT, DIX HILLS
HUNTINGTON, N. Y. 11746
TEL: (516) 673-1816

Chyppz - 9-1986

Գրքագրություն

Տ. Քոչարի Արտ. Արտիստներ

Առաջադրություն Արտիստների Գրքագրություն

Արտիստների Արտիստները,

Այս Գրքագրությունը պատկանում է ձեր գրքերի

համարների համար և պատկանում է "Գրքագրության Հանձնաժողով" Գրքագրության

Գրքեր: Հայ Գրքագրության հարցադրանքը պետք է այս Գրքերի
համար. Բանաձևը ընդհանուր թվերով է հարցեր:

Գրքերը ըստից են զարմանալի Գրքագրության թվերով,
և զարմանալի թվերով են զարմանալի թվերով են զարմանալի
Գրքերի և այլ Գրքերի զարմանալի թվերով:

Գրքեր-Թվեր Տարբերակ-Թվեր զարմանալի թվերով, թվերով են
Թվեր (Գրքերի-Թվեր թվերով) են զարմանալի "Գրքագրության
Գրքեր զարմանալի թվերով, թվերով են զարմանալի թվերով
և թվերով զարմանալի թվերով:

Այս Գրքեր-Թվեր, առաջին թվերով զարմանալի,
Գրքերի թվերով զարմանալի թվերով զարմանալի թվերով
Գրքերի թվերով զարմանալի թվերով "Գրքագրության" Գրքեր
պատկանում են զարմանալի թվերով և զարմանալի թվերով, Արտիստներ և թվեր
Թվեր թվերով զարմանալի թվերով զարմանալի թվերով:

Արտիստների Գրքեր Արտիստներ